

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ Է

COVID-19. ՄԱՐՏԻ 21-ԻՅ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ Է ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Մարտի 21-ին Վրաստանի կառավարությունը, երկրում նոր կորոնավիրուսի զանգվածային տարածումը կանխելու նպատակով, երկրի ողջ տարածքում արտակարգ դրություն հայտարարելու խնդրանքով դիմեց Վրաստանի նախագահին: Սալոմե Ջուրաբիշվիլին, ընդառաջելով կառավարության խնդրանքին, հրավիրեց երկրի խորհրդարանի արտահերթ նիստ, հիմնավորելով արտակարգ դրություն հայտարարելու անհրաժեշտությունը, եւ պատգամավորներին կոչ արեց պաշտպանել գործադիր իշխանության կողմից վարակի հնարավոր տարածումը կանխելուն ուղղված միջոցառումները:

Վրաստանի խորհրդարանը, մարտի 21-ի իր արտահերթ նիստում՝ 115 ձայնով, հավանություն տվեց Վրաստանում արտակարգ դրություն հայտարարելու օրինանախագծին: Օրինանախագիծը հաստատելուց հետո, Վրաստանի խորհրդարանը նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու եւ վարչապետ Գիորգի Գախարիայի ստորագրություններով, վավերացվեց Վրաստանում արտակարգ դրության պայմաններում իրականացվելիք միջոցառումների մասին դեկրետը, ըստ որի, մեկամսյա ժամկետում՝ մարտի 21-ից ապրիլի 21-ը, Վրաստանում հայտարարվեց արտակարգ դրություն:

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԸ

Մարտի 21-ից Վրաստանի ողջ տարածքում հայտարարված արտակարգ դրության պայմաններում, «Արտակարգ դրության մասին» Վրաստանի օրենքի համաձայն, արտակարգ դրության ժամանակ կոնկրետ հանգամանքներին համապատասխան, Վրաստանի գործադիր իշխանության գերագույն մարմինները, իրենց իրավասության շրջանակներում օրենսդրության պահանջների պաշտպանությանը կարող են իրականացնել հետևյալ միջոցառումները.

- * Ուժեղացնել հասարակական կարգի եւ այն օբյեկտների պաշտպանությունը, որոնք ապահովում են բնակչության գործունեությունը եւ տնտեսության գործունեությունը
- * Ժամանակավոր դուրս բերել քաղաքացիներին բնակության համար վտանգավոր շրջաններից եւ պարտադիր տրամադրությունները (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԻՆՉ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐ Է ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Արտակարգ դրության մասին դեկրետի հրապարակումից հետո, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հատուկ հրավիրված մամուլի ասուլիսում հանդես եկավ արտակարգ դրությանը պայմանավորված սահմանափակումների պարզաբանմամբ:



Նրա խոսքով, մեկուսացման կամ կարանտինի կանոնների խախտումների համար, անձը պետք է պարտադրաբար տեղափոխվի համապատասխան հիմնարկ: Ցանկացած խախտման համար կիրառվի պատժամիջոց: Միջազգային ցամաքային ուղեւորատարությանը վերաբերող սահմանափակումները չեն առնչվում բեռնափոխադրումներին: Սահմանվել են պետական ծառայությունների մատուցման տարբեր (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳ՝ ՄԱՌՆԵՌԻՆԻ ԵՎ ԲՈԼՆԻՍԻ ՄՈՒՆԻՅԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ

Մարտի 23-ին նոր կորոնավիրուսի դեմ պայքարի միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստի ավարտից հետո, խորհրդի նախագահ, վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ Մառնեուլիի եւ Բոլնիսի մունիցիպալիտետներում հայտարարվում է կարանտին:

- Մարտի 21-ին հայտարարվել է արտակարգ դրություն: Այսօր մենք ունեցանք բարդ դեպք, Մառնեուլիում ունենք վարակված կին, որի վարակման աղբյուրը դեռեւս բացահայտված չէ: Սա այն դեպքն է, որի մասին մենք խոսել ենք, որ սկսվելու էր ներքին տարածումը: Իրավիճակը բարդ է, եւ սա այն հիմնական մարտահրավերն է, որը մենք անվանում ենք անցում դեպի տարածման նոր փուլ, եւ որի համար պատրաստված ենք: Վրաստանի կառավարությունը որոշում է կայացրել, որ Մառնեուլիի եւ Բոլնիսի մունիցիպալիտետներն անցնում են խիստ կարանտինի ռեժիմի,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

(Խիստ կարանտինի պայմանակարգով պայմանավորված՝ հաճախ տրվող հարցերի պատասխանները տես 8-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՆԻՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԵՐԿՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ՝ ԿԱՊՎԱԾ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՀԵՏ

Նոր կորոնավիրուսի տարածման արդյունքում սահմանված արտակարգ իրավիճակի հետ կապված՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը մարտի 24-ին հանդես եկավ հատուկ ուղերձով: Երկրի բնակչությանն ուղղված ուղերձում, մասնավորապես, ասված է:



«Հայաստանը, հայ ժողովուրդը, ինչպես ամբողջ մարդկությունը, դժվար օրեր են ապրում: Նոր կորոնավիրուսի համաճարակը ոչ միայն շարունակում է տարածվել աշխարհում, այլև, Առողջապահության համաշխարհային կազմակերպության համաձայն, նոր թափ է հավաքում: Աշխարհում ավելի քան 350 հազար կորոնավիրուսի հաստատված դեպք կա, ավելի քան 16 հազար մարդ մահացել է վարակից: Ի՞նչ գիտենք մենք կորոնավիրուսի մասին: Դա մի վարակ է, որը արագորեն մարդուց անցնում է մարդուն օդակաթիլային եղանակով, ախտահարում է մարդու շնչառական համակարգը, արտահայտվում է չոր եւ տեսական հազով, շնչարգելությամբ, որն ուղեկցվում է ջերմությամբ եւ հասնում ընդհուպ ծայրահեղ ծանրության թրջաբորբի: (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՅԱՆՎՈՒ ԳԻՐԳԻ ԳԱԽԱՐԻԱՅԻ ԵՎ ՆԻԿՈԼ ՓԱՆԻՆՅԱՆԻ ՀԵՌԱՆՈՍԱԶՐՈՒՅՈՒՅՈՒՄ

Մարտի 27-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հեռախոսազրույց ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

Երկու երկրների վարչապետերը տեղեկություն փոխանակեցին իրենց երկրներում COVID-19 համաճարակով պայմանավորված իրավիճակի վերաբերյալ: Քննարկվեցին Վրաստանի տարածքով հայկական ապրանքների տարանցիկ փոխադրման

առնչվող հարցեր: Հատուկ միջոցներ են ձեռնարկվում Լարսի մաքսակետով անխափան բեռնափոխադրումները ապահովելու ուղղությամբ: Նիկոլ Փաշինյանը եւ Գիորգի Գախարիան կշարունակեն կանոնավոր շփումները հետագա խնդիրներին արագորեն արձագանքելու համար:

COVID-19

ԱՆԽԱՐՀՈՒՄ՝ ԿԵՍ ՄԻԼԻՈՆԻՅ ԱՎԵԼԻ ՎԱՐԱԿՎԱԾ

Աշխարհում նոր կորոնավիրուսի վարակակիրների թիվը գերազանցել է 500 000-ը: Ձոն Հոփքինսի ինստիտուտի տվյալներով, վարակված է 510 108 մարդ, 120 000-ին հաջողվել է ապաքինվել:



Նոր կորոնավիրուսի հետեւանքով, վերջին տվյալներով գոհվել է 22 993 մարդ: Ձոների թվով կրկին առաջին տեղում է Իտալիան, որտեղ վարակի հետեւանքով մահացել է 8165 մարդ: Երկրորդ տեղում է Իսպանիան, որտեղ գոհերի թիվը հասել է 4089-ի: Վարակված է 56 188 մարդ: Վերջին 24 ժամում վարակի տարածման ռեկորդային ցուցանիշ է գրանցվել Բելգիայում: Մեկ օրում այստեղ կորոնավիրուս է արձանագրվել 1298 մարդու մոտ, վարակակիրների ընդհանուր թիվը հասել է 6235-ի:

Մարտի 27-ի տվյալներով, Վրաստանում կորոնավիրուսով վարակվածների թիվը հասել է 81-ի, արդեն բուժվել է 13 մարդ: Սրա հետ մեկտեղ, կարանտինում է գտնվում 4505, իսկ ստացիոնար բուժում է ստանում 247 քաղաքացի: Հայաստանում կորոնավիրուսով վարակվածների թիվը հասել է 329: Մարտի 27-ի տվյալներով, երկրում կորոնավիրուսից բուժվել է 18, մահացել՝ մեկ մարդ: Հիվանդանոցում բուժումը շարունակում է 311 հոգի: (Խորագրի շարունակությունը՝ 5-րդ էջում)

